«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ ԵՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ N 52

«29» 11 2019թ. ք. Գորիս

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ -Ի ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ ԵՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Գորիս պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ուսանողների գիտելիքների ստուգման, ստուգարքների և քննությունների անցկացման, գնահատման և բողոքարկման կանոնակարգը:

Նախագահ՝ ԱՐԱՐԱՏ ԼԱԼԱԲԵԿՅԱՆ _____

(ստորագրություն)

Քարտուղար՝ ԴԱՎԻԹ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ _____

(ստորագրություն)

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ՏՆՕՐԵՆ

ՀՐԱՄԱՆ N 233

«02» 12 2019թ.

Ք.

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ ԵՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Գորիս պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ուսանողների գիտելիքների ստուգման, ստուգարքների և քննությունների անցկացման և գնահատման կանոնակարգը/ նոր խմբագրությամբ/:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՏՆՕՐԵՆ՝ ԿԱՐԵՆ ԼԱԶԱՐՅԱՆ

(ստորագրություն)

Հաստատված է
«Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի
201__թ. «_____» «____» N_____ հրամանով

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ ԵՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են «Կրթության մասին» ՀՀ օրենքները, ԳՊՔ կանոնադրությունը, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը, մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները և այլ իրավական ակտեր:
2. Սույն կանոնակարգը կարգավորում է ուսանողների գիտելիքների անընդհատ ստուգման, ընթացիկ և կիսամյակային քննությունների ամբողջ առարկայից/մոդուլից կամ դրա առանձին բաժիններից և տվյալ ժամանակահատվածում ուսանողի կատարած աշխատանքի գնահատման, ստեղծագործական մտածողության զարգացման, ինքնուրույն, սիստեմատիկ աշխատանքի հմտությունների ձեռքբերման, գործնական խնդիրների լուծման մեջ ստացած գիտելիքների կիրառման կարողության, ստացած գնահատականի վերահանձնման (բողոքարկման) գործընթացը:
3. Ուսանողի գիտելիքների անընդհատ ստուգումն իրականացվում է առավելապես լաբորատոր, գործնական և սեմինար պարապմունքներին, որի կազմակերպումը պարտադիր է և որը նպաստում է ուսանողների գիտելիքների անընդհատ կուտակման ու կիսամյակի ընթացքում սիստեմատիկ աշխատանքներին, ինքնուրույն աշխատանքի զարգացման և ուսանող-դասախոս արտաժամյա (արտալսարանային) ուսուցման գործընթացին:

ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ, ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ, ՀԱՆՁՆՈՒՄԸ, ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ, ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԹՎԱԲԱՆԱԿԱՆԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

4. Ստուգարքները, որպես կանոն, ծառայում են ուսանողների կողմից կատարվող լաբորատոր, գործնական ու սեմինար պարապմունքների նյութերի յուրացման ստուգման ձևը: Ստուգարքները կարող են սահմանվել ինչպես առանձին առարկայից/մոդուլից, այնպես էլ նրանց առանձին բաժիններից:
5. Ուսանողները պարտավոր են բոլոր ստուգարքները և քննությունները հանձնել ուսումնական պլաններին, սահմանված ժամանակացույցերին և գրաֆիկներին համապատասխան:
6. Ուսանողների ընթացիկ գիտելիքների ստուգումներն անց են կացվում կիսամյակի ընթացքում առարկայի/մոդուլի առանձին մասերից:
7. Ուսումնական տարվա ավարտին հաշվարկվում է ուսանողների առաջադիմությունը՝ տվյալ ուսումնական տարվա ուսումնասիրած առարկաների/մոդուլների, պրակտիկաների գնահատականների ընդհանուր միջին թվաբանականը:

7.1. Մինչև 36 ժամ բացակայության դեպքում տվյալ ուսումնական տարվա ուսումնասիրած առարկաների/մոդուլների գնահատականների ընդհանուր միջին թվաբանականից միավոր չի հանվում է:

7.2. 36-ից մինչև 72 ժամ բացակայության դեպքում տվյալ ուսումնական տարվա ուսումնասիրած առարկաների/մոդուլների գնահատականների ընդհանուր միջին թվաբանականից հանվում է 1 միավոր:

7.3. 72-ից մինչև 215 ժամ բացակայության դեպքում տվյալ ուսումնական տարվա ուսումնասիրած առարկաների/մոդուլների գնահատականների ընդհանուր միջին թվաբանականից հանվում է 2 միավոր:

7.4. 216 ժամ և ավելի բացակայության դեպքում, համապատասխան ներքին կարգապահական կանոնակարգի, ուսանողը հեռացվում է քոլեջից:

8. Նույն կիսամյակում ստուգարքով ավարտվող առարկաներից/մոդուլներից ուսանողի ստուգարքը կարող է համարվել հանձնված, եթե ուսանողը սիստեմատիկ հաճախել է դասերին, լիարժեք կատարել է բոլոր տեսական ու գործնական առաջադրանքները՝ պահպանելով սույն կանոնակարգի 11-րդ կետի պահանջները:

9. Առարկայական/մոդուլային ստուգարքներն ընդունում է դասախոսություն կարդացող, լաբորատոր-գործնական (սեմինար) վարող դասախոսները: Ստուգարքը կարող է ընդունվել նաև ընթերակայի ներկայությամբ՝ բացառությամբ հանրակրթական առարկաների:

10. Առարկայական/մոդուլային քննություններն ընդունում է դասախոսություն կարդացող, լաբորատոր-գործնական (սեմինար) վարող դասախոսները, ամբիոնի վարիչի/մեթոդմիավորման նախագահի հսկողությամբ: Քննությունն ընդունվում է ընթերակայի ներկայությամբ:

11. Առարկայական, մոդուլային ուսուցման դեպքում ընդունելի կատարողականներն են (վերջնարդյունք).

11.1. Մոդուլային ուսուցման դեպքում մոդուլի ընդունելի կատարողականը (վերջնարդյունք) յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է՝ ուսանողի կողմից մոդուլի յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված գնահատման միջոցի պահանջների կատարմամբ:

11.2. Առարկայական ուսուցման դեպքում առարկայի ընդունելի կատարողականը (վերջնարդյունք) սահմանված է մասնագիտության պետական կրթական չափորոշչի 2.2 կետում, որում սահմանվում են ըստ դասընթացների *մաստագետի* պատրաստվածության մակարդակի նկատմամբ պահանջները:

11.3. Հանրակրթական առարկաների ընդունելի կատարողականը (վերջնարդյունք) սահմանված է առարկայի չափորոշչի «Սովորողներին ներկայացվող չափորոշիչային պահանջներ» բաժնում:

12. Ստուգարքները, քննություններն անց են կացվում երեք փուլով.

12.1. Ստուգարքի առաջին փուլն ըստ օրացուցային թեմատիկ-պլանի տվյալ առարկայի/մոդուլի դասավանդման վերջին օրն է:

12.2. Քննության առաջին փուլն ըստ ուսումնական մասի կողմից կազմված և տնօրենի կողմից հաստատված քննությունների հանձման ժամանակացույցի օրն է:

12.3. Երկրորդ փուլն ուսումնական մասի կողմից սահմանված և տնօրենի կողմից հաստատված ակադեմիական պարտքերի մարման ժամկետն է՝ ընթացիկ ուսումնական տարվա դեկտեմբեր ամսվա երրորդ շաբաթից մինչև հունվար ամսվա երրորդ շաբաթն ընկած ժամանակահատվածում՝ 1-ին կիսամյակի համար և ընթացիկ ուսումնական տարվա հունիս ամսվա առաջին շաբաթից մինչև հունիս ամսվա երրորդ շաբաթն ընկած

ժամանակահատվածում՝ 2-րդ կիսամյակի համար (ակադեմիական պարտքերի մարման առաջին փուլ):

12.4. Երրորդ փուլն ուսումնական մասի կողմից սահմանված և տնօրենի կողմից հաստատված ակադեմիական պարտքերի մարման ժամկետն է՝ նոր ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնական պարապմունքներին զուգահեռ երկրորդ և երրորդ շաբաթվա ընթացքում՝ նախորդ ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ակադեմիական պարտքերի մարման համար և ընթացիկ ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսումնական պարապմունքներին զուգահեռ երկրորդ և երրորդ շաբաթվա ընթացքում՝ ընթացիկ ուսումնական տարվա առաջին կիսամյակի ակադեմիական պարտքերի մարման համար (ակադեմիական պարտքերի մարման երկրորդ փուլ):

13. Հեռակա ուսուցման մասնագիտությունների ստուգարքները, քննություններն անց են կացվում երկու փուլով.

13.1. Ստուգարքի առաջին փուլն ըստ օրացուցային թեմատիկ-պլանի տվյալ առարկայի/մոդուլի դասավանդման վերջին օրն է և/կամ մասնագիտության ուսումնական պլանի ժամանակացույցով սահմանված ժամկետը:

13.2. Քննության առաջին փուլն ըստ ուսումնական մասի կողմից կազմված և տնօրենի կողմից հաստատված քննությունների հանձման ժամանակացույցի օրն է:

13.3. Երկրորդ փուլն ուսումնական մասի կողմից սահմանված և տնօրենի կողմից հաստատված ակադեմիական պարտքերի մարման ժամկետն է՝ ընթացիկ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի մեկնարկի 1-ին և 2-րդ շաբաթվա ընթացքում՝ 1-ին կիսամյակի համար և հաջորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակի մեկնարկի 1-ին և 2-րդ շաբաթվա ընթացքում՝ 2-րդ կիսամյակի համար (ակադեմիական պարտքերի մարման առաջին փուլ):

14. Նույն կիսամյակում ստուգարքով և/կամ քննությունով ավարտվող առարկաներից/մոդուլներից ուսանողը կարող է ունենալ առավելագույնը մինչև 3 ակադեմիական պարտք: 4 և ավելի ակադեմիական պարտքեր ունեցող ուսանողը ենթակա է հեռացման: Այն դեպքում, երբ ուսանողը չի կատարել սույն կանոնակարգի 12.4. և 13.3. կետերի պահանջները և այդ կետերում նշված ժամկետներից դուրս շարունակում է ունենալ 1 և ավելի ակադեմիական պարտք, ենթակա է հեռացման:

15. Այն դեպքում, երբ ուսանողը չի ներկայացել 4 և ավելի ստուգարքի և/կամ քննության և ստացել է «չի ներկայացել».

15.1. բացակայությունը հիմնավորող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում նրա բացակայությունը համարվում է հարգելի և նրան թույլատրվում է ակադեմիական պարտքերի մարման ժամկետներում և/կամ ուսումնական մասի կողմից սահմանված ստուգարքների և քննությունների հանձման անհատական ժամանակացույցի համապատասխան հանձնել ստուգարքը և/կամ քննությունը՝ պահպանելով նախկինում ունեցած բոլոր պայմանները: Ուսանողը տնօրենին է ներկայացնում գրավոր դիմում: Հանձնած գնահատականի համար կազմվում է առանձին տեղեկագիր, որի մեջ փոխանցվում է ուսանողի ստացած գնահատականները:

15.2. բացակայությունը հիմնավորող փաստաթուղթ չներկայացնելու դեպքում, ստուգարքին և/կամ քննությանը նրա բացակայությունը համարվում է անհարգելի և համապատասխան սույն կանոնակարգի 14-րդ կետի, ուսանողը ենթակա է հեռացման:

16. Սույն կարգի 12.4, 13.3 կետով սահմանված ժամկետներում չներկայացած և բացակայությունը հիմնավորող համապատասխան փաստաթուղթ չներկայացրած և/կամ անբավարար ստացած ուսանողը ենթակա է հեռացման:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՆՁՆՈՒՄԸ (ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ)

17. Ուսանողների կողմից ստացած գնահատականների վերահանձնումների (բողոքարկումների) առավելագույն քանակ է սահմանվում 3 առարկան/մոդուլը, յուրաքանչյուրից առավելագույնը 2 անգամ: Ուսանողներին հնարավորություն է ընձեռվում ստուգարքները, քննությունները վերահանձնել յուրաքանչյուր կիսամյակի ավարտին՝ ակադեմիական պարտքերի մարման առաջին փուլի ընթացքում՝ բացառությամբ բանավոր ստուգարքի/քննության: Նախաավարտական կիսամյակում (ըստ մասնագիտությունների ուսումնական պլանների 6-րդ կամ 8-րդ կիսամյակ) վերահանձնումներ չեն թույլատրվում, բացառությամբ սույն կարգի 22-րդ կետի պահանջների: Պրակտիկաների համար վերահանձնում չի նախատեսվում:
18. Ուսանողների կողմից ստացած գնահատականների վերահանձնումը (բողոքարկումը) կատարվում է հանձնաժողովով, որի կազմի մեջ մտնում են՝ տվյալ առարկայի/մոդուլի դասախոսը, նույն կամ հարակից մասնագիտությամբ մեկ դասախոս, տվյալ առարկայի/մոդուլի գծով ամբիոնի վարիչը կամ մեթոդմիավորման նախագահը և տվյալ առարկայի/մոդուլի քննման համար նշանակված ընթերական, բացառությամբ բանավոր ստուգարքի/քննության, որի դեպքում վերահանձնումն ընդունում են տվյալ առարկայի/մոդուլի դասախոսը և նշանակված ընթերական:
19. Ուսանողների կողմից ստացած գնահատականների վերահանձնումը (բողոքարկումը) կատարվում է հետևյալ կերպ.
    19.1. բանավոր ստուգարքը/քննությունը բողոքարկվում է քննասենյակից դուրս չգալով՝ պահպանելով սույն կանոնակարգի 17-րդ կետի պահանջները:
    19.2. գրավոր ստուգարքի/քննության գնահատականի բողոքարկման համար գրավորի ստուգման և գնահատականների հրապարակման պահից հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում ուսանողը ուսումնական գծով փոխտնօրենին է ներկայացնում գրավոր դիմում՝ պահպանելով սույն կանոնակարգի 17-րդ կետի պահանջները:
20. Վերահանձնած գնահատականի համար կազմվում է առանձին տեղեկագիր, որի մեջ փոխանցվում է ուսանողի ստացած գնահատականը, որը չի կարող նվազ լինել իր նախորդ գնահատականից: Տեղեկագիրը ստորագրվում է հանձնաժողովի բոլոր անդամների կողմից: Ուսանողի ստացած գնահատականը փոխանցվում է կիսամյակային ամփոփագրի մեջ: Առանձին տեղեկագիր չի կազմվում բանավոր ստուգարքի/քննության, պետական ամփոփիչ ատեստավորման, դիպլոմային նախագծի (աշխատանքի) արդյունքների գնահատման համար:
21. Դիպլոմային նախագիծը (աշխատանքը) չպաշտպանած կամ պետական քննությունները չհանձնած ուսանողին թույլատրվում է վերահանձնել դիպլոմային նախագիծը (աշխատանքը) կամ պետական քննությունները քոլեջն ավարտելուց հետո 3 տարվա ընթացքում:
    Ուսանողը պետական քննությունները վերահանձնելիս հանձնում է քննություններ այն առարկաներից, որոնք նախատեսված են եղել նրա ավարտման տարում գործող ուսումնական պլանով: Քոլեջն ավարտելուց երեք տարուց հետո պետական քննությունների վերահանձնման թույլտվությունը տալիս է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:
22. Ամբողջ ուսումնառության ընթացքում գերազանց առաջադիմություն ցուցաբերած, սակայն այդ ընթացքում մինչև 2 «բավարար» գնահատական ստացած ուսանողներին թույլատրել նախաավարտական կիսամյակային քննաշրջանում վերահանձնել առարկայական/մոդուլային ստուգարքները, քննությունները՝ սույն կարգի 18-րդ կետի պահանջների պահպանմամբ: Վերահանձնած գնահատականի համար կազմվում է առանձին տեղեկագիր, որի մեջ փոխանցվում է ուսանողի ստացած գնահատականը, որը չի կարող

նվազ լինել իր նախորդ գնահատականից: Տեղեկագիրը ստորագրվում է հանձնաժողովի բոլոր անդամների կողմից և կցվում տվյալ մասնագիտության տվյալ կուրսի տեղեկագրերի փաթեթին: Ուսանողի ստացած գնահատականը փոխանցվում է դիպլոմի հավելվածի մեջ: Ուսանողը վերահանձնումից երեք աշխատանքային օր առաջ ուսումնական գծով փոխտնօրենին է ներկայացնում գրավոր դիմում, որը կցվում է տեղեկագրին:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

23. Քննաշրջանում ուսանողների գիտելիքները գնահատվում են. 1 գնահատականը համարվում է շատ վատ (և/կամ անբավարար), 2՝ վատ (և/կամ անբավարար), 3՝ անբավարար, 4՝ բավարար, 5՝ միջին (և/կամ բավարար), 6՝ միջինից բարձր (և/կամ բավարար), 7՝ լավ, 8՝շատ լավ (և/կամ լավ), 9՝ գերազանց, 10՝ բացառիկ (և/կամ գերազանց):
24. Մասնագիտության ուսումնական պլանով սահմանված չտարբերակված ստուգարքները գնահատվում են. «ստուգված», «չստուգված» եղանակով:
25. Ավարտական քննությունները (հանրակրթություն) գնահատվում են 20 բալով, որից՝ 0-7 միավորին համապատասխանում է 2 (անբավարար) գնահատականը, 8-12-ին՝ 3 (բավարար), 13-17-ին՝ 4 (լավ), 18-20-ին՝ 5 (գերազանց):
26. Պետական ամփոփիչ ատեստավորման, դիպլոմային նախագծի (աշխատանքի) արդյունքները գնահատվում են. 5՝ «գերազանց», 4՝ «լավ», 3՝ «բավարար», 2՝ «անբավարար»: